

ՄՈՎԱՅԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Վ. Ս. ՆՆՐՍԻՍՅԱՆ

V դարի 80-ական թթ. պարսկական բռնապետության դեմ ուղղված հաջազատագրական պայքարի նախապատրաստության շրջանում Մովսես Խորենացին ավարտեց իր «Հայոց պատմությունը», որ հետագա երկար ու ձիգ դարերի ընթացքում հայության համար ծառայեց որպես ինքնաճանաչման, կրթության և դաստիարակության հուսալի ձեռնարկ։ Այսպիսի բացառիկ նշանակության գրքի ստեղծումը ենթադրում է գրավոր հուշարձանի, մասնավորապես՝ պատմագրական երկի մասին արդեն ձևավորված ըմբռնումների մի որոշակի համակարգ, որի էական կողմերը բարեբախտաբար արտահայտություն են գտել «Հայոց պատմության» մեջ։ Այդ ըմբռնումները խորապես պայմանավորված են ժամանակաշրջանի համազգային քաղաքական պահանջներով, որոնց թելադրանքով էլ պատմությունը գրելու համար հավաքած ողջ հսկայածավալ նյութից Խորենացին ընտրել, մշակել և իմաստավորել է այն ամենը, ինչ նպաստելու էր հայության ոգու, հայրենասիրական զգացմունքների և ազատագրական ձգտումների ամրապնդմանը։

Մինչև «Հայոց պատմության» շարադրմանը ձեռնամուխ լինելը, Խորենացին անցել էր դրական-մշակութային գործունեության երկար ճանապարհ։ Երիտասարդական տարիներին նա բարձրագույն կրթություն էր ստացել հունական գիտության մեծահամբավ կենտրոններից մեկում՝ Ալեքսանդրիայում։ Նկատի ունենալով այս փաստը¹, ինչպես նաև գիտելիքների ողջ մակարդակը, անտիկ, հելլենիստական և վաղ քրիստոնեության ժամանակների գրավոր ժառանգությանը քաջածանոթ լինելու իրողությունը, կարելի է անվարան պնդել, որ Խորենացին իմացել է մի շարք օտար լեզուներ, հատկապես՝ հունարենը, ուսումնասիրած է եղել քերականության և ճարտասանության տեսությունները, տիրապետել է քերթողական արվեստին, սովորել է դիցաբանություն, փիլիսոփայություն, պատմություն, գրականություն, աստվածաբանություն։ Գրավոր վկայություններն ու մատենագրական փաստերի հետազոտության արդյունքները Խորենացու անվան հետ են կապում «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ» և «Գիրք պիտոյից» երկերի թարգմանությունները՝ երկու նշանավոր հուշարձաններ, որ խոր հետք են թողել միջնադարյան Հայաստանի մշակութային կյանքում։ Աղբյուրները նրան են վերագրում ներքողյաններ, ճառեր, շարականներ, քերականական աշխատություններ և այլն։

Բայց միայն «Հայոց պատմությունից» էլ հստակորեն երևում է, որ Խորենացին իսկական գրող է, մտածող, մտավորական։ Իր ժամանակի մեծ մասը նա անցկացրել է գրելով կամ թարգմանություններ անելով։ Պատահա-

¹ Խորենացին պատմում է, որ Եփեսոսի ժողովից (431 թ.) հետո, երբ Հայաստան բերվեց Սբ. Գրքի հունարեն ստուգված օրինակը, սրա հայերեն թարգմանության պահանջի հետ ծագում է նաև քաջ հունագետներ և քերթողական արվեստի գաղտնիքները յուրացրած թարգմանիչներ ունենալու խնդիրը։ Այս նպատակով իրեն մի քանի ուրիշ աշակերտների հետ Մեսրոպն ու Սահակ կաթողիկոսը ուղարկում են Ալեքսանդրիա՝ «ի լեզու պանծալի, ի ստոյգ յօդանալ ճեմարանին» (տե՛ս Մովսիս Խորենացու Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Մ. Արեղեան և Ս. Յարութիւնեան. Տփղիս, 1913, էջ 343։ Այսուհետև սույն հրատարակության էջերը կնշվեն շարադրանքի մեջ)։

կան չէ ույն փոստը, որ մարզպան Սահակ Բագրատունույ ստանալով պատմությունը գրելու առաջարկությունը, Քերթողահայրն ապրել է արտակարգ հրեմանք և ավելացրել. «...սիրելի իսկ իմոյ ախորժակացս է, առաւել նստավարձութեանցս» (էջ 5)։ Ուրիշ անգամ, հասկացնելով պատվիրատուին, որ հնաբանությունը չունի մանրամասնորեն հյուսելու նրան հետաքրքրող բոլոր հարցերի պատմությունը, նա ասում է. «Զի նս նս այր եմ... անսպասարկ թարգմանութեանց» (էջ 353)։

Պատմության էջերում խորհնացին հաճախ է պիմում օտար և հայ հեղինակներին։ Նա առանձնապես բարձր կարծիք ունի հույն գրողների և առհասարակ՝ հունական գիտության ու մատենագրության մասին։ Հայ մտածողի խորին համոզմամբ՝ հունական աշխարհը մշակութային նախանձելի նվաճումների է հասել շնորհիվ ահա բանի, որ նրա և՛ պատական, և՛ մտավոր գործիչները մի առանձին հետեղականությամբ են աշխատանք տարել այդ ուղղությամբ՝ կազմակերպելով և յուրացնելով նաև հարևան ժողովուրդների գիտական ու գրական փորձը։ Այսպես, հիմնավորելով հունական սկզբնաղբյուրներին նախապատվություն տալու իր մոտեցումը, պատմիչը գրում է. «Քանզի ոչ թալալորքն Յունաց միայն՝ որպէս զաշխարհակալութեանն, այսպէս և որ ինչ իմաստութեան ջանք՝ փոյթ յանձին կալան աւանդել Յունաց, ...այլ և բաղում արև անուանիք և իմաստութեան պարապեալք ի Յունաց աշխարհէն՝ հոգացան... զգիրս դիւանացն այլոց աղգաց թագաւորացի և դմհհնիցն լեզու ի յոյն բան... այլ և զմեծամեծս և զարմանալոյ արժանաւորս յարուեստից. և ուրեք ուրեք գտեալ աշխատութեամբ, հաւաքեալ փոխեցին ի յոյն լեզու... Եւ ժողովեալ զայսոսիկ արանց... նուիրեցին ի փառս հելլենացւոց աշխարհին... Վասն որոյ և զբոլոր իսկ զՅոյնս ոչ դանդաղիմ մայր կամ դայեակ ասել իմաստից» (էջ 7—9)։

Այս նվաճումների բարձր գնահատման, դրանց ուղիների բացահայտման գլխավոր շարժառիթը հունականի օրինակով հայ ազգային գրավոր մշակույթի արգասաբեր շինության հոգան է, որ իբրև անհետաձգելի պահանջ և կարևորագույն ծրագիր պաշտպանում է խորհնացին։ Նկատենք, որ այդ հոգսը հատուկ էր միայն V դարի երկրորդ կեսի մտավոր շարժմանը, երբ նոր-նոր դրվել էին հայ ինքնուրույն և թարգմանական մատենագրության հիմքերը, և անհրաժեշտ էր ապահովել նրա որակն ու ցանկալի վերելքը։ Հետագա դարերում այդ հոգսն արդեն հիմնականում լուծված խնդիր էր և կարիք չունեիր այսպիսի սուր հարցադրման։

Հունական մատենագրության մասին նման հայացքի առկայության դեպքում ամենևին զարմանալի չէ այն իրողությունը, որ հեղինակը հաճախ է վկայակոչում հունալեզու գրականության շատ երևելի ներկայացուցիչներին, այդ թվում նաև Հովներոսին, Հերոդոտոսին, Պլատոնին, Պոլևարխոսին, Գիոդորոս Միկիլիացուն, Եվսեբիոս Կեսարացուն և ուրիշների, իսկ առանց անունների տալու երբեմն օգտագործում է Արիստոտելի, Փիլոնի, Գրիգոր Նյուապոլի և այլ հեղինակների մտքերն ու ասույթները։

Իր հիշատակած ոչ բոլոր աղբյուրների մասին է դատողություններ անում խորհնացին։ Մի քանիսից նա միայն վկայակոչումներ է անում, ուր շնորհիկերն է հիշում, նշելով դրանց ընդգրկման սահմաններն ու բովանդակության առանձին կողմերը։ Հատկապես ուշագրավ են այն հատվածները, որոնցում դրսևորելով դրվատական կամ քննադատական վերաբերմունք, Զեոթողահայրը փորձում է որոշ հեղինակների գրվածքների նկատմամբ հանդես բերել գնահատման գեղադիտական չափանիշ։ Օրինակ՝ անդրադառնալով Արտաշեսի վախճանին, նա այն տեսակետն է հայտնում, թե «զեղեիկ իմն պատմէ ... Արիստոն Փեղղեցի»² յաղագս մահուանն Արտաշեսի (էջ 189)։ Իսկ

² Արիստոն Փեղղեցին համարվում է I դարի վերջի և II դարի սկզբի պատմիչ։ Նրան հիշում և վկայակոչում է նաև Եվսեբիոս Կեսարացին (տե՛ս Նեսեբիոսի Կեսարացւոյ Պատմութիւն եկեղեցւոյ, ի ձեռն Կ. Արրահամ վ. Զարեան. Վիեննայի, 1877, էջ 244—245)։

թե ինչու է նա գեղեցիկ կոչում Արիստոնի պատմածը, պարզվում է այն հաստատվածից, որ քաղել է նրանից Խորենացին: Ահա այն. «Գրէ յԱրիստոնի, եթէ որչափ ամբողջութիւնք մեռան ի մահուանն Արուաշիսի, սիրելի կանայք ե հարճք ե մտերիմ ծառայք. ե որպիսի շուք բաղմադիմիս արարին իսկ ի պատիւ դիոյն, քաղաքականաց կարողք ե ոչ որպէս պարբարոսս: Դապաղքն էին, ասէ, ոսկեղէնք, գահոյքն ե ինկողինքն բնակեցաւ. ե պատմուեալն որ զմարմնովն՝ ոսկեթել, թագ կապեալ ի գլուխն ե զէնն ոսկեով առաջի եղեալ. ե զգահոյիքն շուրջ՝ որդիքն ե քաղաքութիւն ազգականացն, ե առ այսոքիւք պաշտօնէիցն զինուորութիւնք, ե նահապետքն ե նախարարութեանցն գունդք ե միանգամայն զօրականացն վաշտք, ամենեքին կազմեալ շինու հանդերձ, իբր թէ ի պատերազմ ճակատիցին. ե առաջի պղնձիս հարկանելով փողս, ե զկնի կուսանք ձայնարկութեան սեղանստք ե աշխարհող կանայք, ե զհետ՝ բազմութիւնք ռամկին: Եւ այսպէս տարեալ թաղեցին» (էջ 190—191): Արիստոնի գիրքը պահպանված չէ, ե այժմ չենք կարող ասել, թե ինչ ճշտությամբ է վկայակոչում նրան Խորենացին: Բայց դժվար չէ նկատել, որ խնդրո առարկա հաստատված լիովին համապատասխանում է Քերթողահոր ազգային բաղձանքներին: Հնարավոր է, որ Խորենացուն գեղեցիկ է թվացել Արիստոնի շարադրանքի պատկերավոր կողմը: Բայց ոչ միայն դա: Խորենացուն ամենից առաջ գրավել է նկարագրութեան քաղաքական լոկալիզմը տրամադրութիւնը: Ճիշտ է, վախճանված է հայոց թագավորը, բայց ուժեղ ե հաստատուն է Հայաստանի գահը, ողջ երկիրը ներկայացված է որպէս մի համախմբված ամբողջութիւն՝ ռազմական հզորությամբ ե պետութեան գլխավորի նկատմամբ տաժած նվիրվածությամբ, դրական ինքնարուխ զգացմունքներով: Ուստի ե բնական է, որ ազգային պետականութիւնը կորցրած, օտար բռնապետութիւններ լծի տակ բաժան-բաժան եղած ժողովրդի մտավոր գործիչը պետք է երանությամբ վերհիշեր նման կացութիւնը ե դրա գեղարվեստական նկարագրութիւնը որակեր «գեղեցիկ» հասկացութեամբ:

Նույն մոտեցմամբ Խորենացին սքանչելի է համարում ասորի մատենագիր Մար Արաս Կատինայի³ այն հաղորդումը, թե նախքան Հայկ Նահապետի Բաբելոնից Այրարատ գալը, այնուամենայնիվ թի յոլով տեղիս գտանէին բնակեալ ի մարդկանէ յերկրիս մերում» (էջ 39): Այսինքն՝ սքանչելի է այն իրողութեան գրավոր վավերացումը, որ մինչև հայ անվանադրութիւնը, որը Խորենացին ածանցում է Հայկ անունից, հայութեան նախնիները արդեն բնակվում էին իրենց հայրենիքում: Ուրեմն սքանչելի է այն միտքը, թե հայութիւնն ավելի հին է, քան նրա անունը: Խորենացին «գեղեցիկ» մակդիրով է բնորոշում նաև «Հայոց պատմութիւն» գրելու կասկածն Մահակ Բագրատունու առաջարկութիւնը:

Այս կամ այն գիրքը գնահատելիս Խորենացին որպէս պատմաբան օգտուող բարձր կիրառում է մի միասնական ե կայուն չափանիշ. որքանով է պատումը ստույգ, հավաստի կամ ճշմարիտ: Ընդ որում՝ ստույգն ու հավաստին նա ոչ ոքում է, ելնելով այլ աղբյուրների հանդէպ ունեցած փաստական համապատասխանութիւնից, իսկ եթե այդպիսի չկան կամ երևան են գալիս հակասութիւններ՝ այն հանգամանքից, թե ուրիշն է արդյոք պատմում հեղի-

³ Մար Արաս Կատինայի մատյանը չի պահպանվել: Որոշ հետազոտողներ կարծում են, թե նա մտացածին անձնավորութիւն է՝ Խորենացու հորինածը: Ուրիշները Պատմահորը արժանահավատ գտնելով, նրան համարում են մ. թ. ա. II, ոմանք էլ՝ մ. թ. IV դարի հեղինակ: Մար Արասին, Խորենացուց անկախ, «Մարարայ փրիսոփայ Մծուրնացի» հորջորջումով ճանաչում է նաև Սերեոսը Գ. Տեր-Մկրտչանը ցույց է տվել, որ Մար Արասի մատյանի տվյալները Խորենացին օգտագործել է «Հայոց պատմութեան» առաջին գրքի Ը—ԺԴ, ԺԸ, ԻԲ—ԻԳ ե երկրորդ գրքի Ա—Բ գլուխները շարադրելիս (տե՛ս Գ. Տեր-Մկրտչյան. Հայագիտական ուսումնասիրութիւններ. գ. Ա, Երևան, 1979, էջ 81—108):

նակը: «Ոճով պատմել»՝ հորենացու հայացքով, ինչպես մեկնաբանում է Մ. Աբեղյանը, նշանակում է նյութը շարադրել «որոշակի համակարգով և հետևողականությամբ, պահպանելով մաքրի փոխկապակցվածությունն ու հիմնավորվածությունը, մատնանշելով գործող անձանց անունները, իրադարձությունների տևը, ժամանակը, սյուժեառները և այլ մանրամասնություններ⁴, հատկանշներ, որ թեև Ալեքսանդրացու «Յաղագս ճարտասանական կրթութեանց» գրքի հայերեն հին թարգմանության (V դար) մեջ կաշվում են պատմության տարրեր⁵:

Այսպես, անդրադառնալով Շամիրամի մահվան մոտեմասերին, հորենացին ակնարկում է, թե այդ մասին միապատյան տարբեր կետք են պատմում Կելիադիոնն⁶ ու Մար Աբաս Կատինան: Նա բարձր է գնահատում Մար Աբասի կատարած քննությունը, համարելով հավաստի, «քանզի ոճով իմնասէ և զպատճառս պատերազմին յայանէ» (էջ 56): Խորենացին Մար Աբասի տարբերակի հավաստիությունը հաստատելու համար վկայակոչում է նաև հայ բանահյուսության փաստերը. «Առասպելք աշխարհիս մերոյ զբազմահրմուտ Ասողին արդարացույանեն» (նույն տեղում): Փերմելիանոս հայկական պոսի «Պատմութիւն հայկականաց եկեղեցւոյ» գրքի այն հատվածը, ուր տրված է Հայաստանում քրիստոնեության հալածանքների և նահատակությունների պատմությունը, Խորենացին համարում է անօգտակար, «զի ո՛չ ճշմարտութեամբ և ոճով պատմէ, և ո՛չ զանունսն նշանակէ կամ զտեղիս կատարմանցն» (էջ 213): Մինչդեռ Խոսրովի մահից մինչև Տրդատի թագավորության ժամանակ, այսինքն՝ Հայաստանի անիշխանության տարիներին (մոտ 260—290 թթ.) տեղի ունեցած իրադարձությունների մասին նույն պատմիչի շարադրանքը նա համարում է ստույգ (էջ 214):

Խորենացին բացառիկ դեր է հատկացնում պատմագրական և առհասարակ տարբեր բնույթի գրավոր երկերի ստեղծմանը: Այս դիտակետից էլ նա կշտամբանքով է խոսում հայ հին թագավորների և իշխանների մասին, դատապարտում նրանց անիմաստասիրությունը, որովհետև հոգ չեն տարել գրով ու պատմությամբ իրենց ժամանակի դեպքերը վավերացնելու: Եվ նրանց նկատմամբ Խորենացու կշտամբանքը ի վերջո վերածվում է խոր արհամարհանրի. «Վասն որոյ աւելորդ է մեզ և այլ յաղագս արանց աւելանից, թուլամտաց, վայրենեաց ճառել» (էջ 11):

Հուկառակ հայ հին առաջնորդների դրսևորած աւփութության, Խորենացին համարում է, որ «թէպէտ և եմք ածու փոքր և թուով յոյժ ընդ փոքու սահմանելու և զօրութեամբ տկար և ընդ տղով յոյժ անգամ նուաճեալ թագաւորութեամբ, սակայն բազում գործք առնթեան գտանին գործեալ և ի մեհում աշխարհիւ և աւժանի գրոյ յիշատակի» (էջ 10):

Խորենացու նպատակն է հայտնելու իր իմաստասիրական աշխատագրական գործունեության, դատախարակել նրանց հայրենասիրության և քաղաքացիականության ոգով, ուստի գիտակցաբար օգտվում է պարզ ու մեկին ոճից, «հասարակաց» խոսքից, «որպէս զի մի ոք երևեսցի ի պերճաբանութիւնս գրաւեալ առ փափագն, այլ ճշմարտութեան բանից մերոց կարօտեալ ստէպ ստէպ և անյագ առնիցեն զընթերցումս պատմութեանց մեղոռ հայրենեաց» (էջ 258):

Ինքնին հասկանալի է, որ այս համոզմունքը հետապնդում է ընթերցողին

⁴ Տե՛ս Մ անուկ Աբեղյան. Երկեր. հ. Գ, Երևան, 1968, էջ 296:

⁵ Թևոնյայ Թաղագս ճարտասանական կրթութեանց, աշխատասիրութեամբ պրոֆ. Թադևոս Մանանդեանի. Երևան, 1938, էջ 69:

⁶ Կեփադիոնի ժամանակն ու երկերը հայտնի չեն: Նրան բանիցս վկայակոչում է նաև Եփեսոս Կեսարացին, անվանելով Գերգեսացի, մատենագիր այլ քաջ, որ գրել է ասորական թագավորության, Հռոմ քաղաքի շինության մասին, հեղինակել երաժշտական մատյաններ (տե՛ս Եսեբի Պամփիլեայ Կեսարացու ժամանակակից երկմասնեայ, աշխատասիրութեամբ հ. Մկրտիչ վ. Ավգերեանց. մասն Ա, Վենետիկ, 1818, էջ 90, 97, 359, 375):

ուպատմության օրինակներով դաստիարակելու նպատակով Եվ իղուր չէ, որ Խորենացին առաջ է քաշում նաև պատմական երկի ճանաչողական արժեքի, դաստիարակչական նշանակության խնդիրը։ Դրանց շնորհիվ, ասում է նա, ճշտ աշխարհօրէն կարգաց իմաստնանալ ասիմք և քաղաքական ուսանել կարգս» (էջ 10)։ Նշանակում է՝ Պատմահոր հայացքով, պատմագրական երկն ամենից առաջ ունի աշխարհիկ-քաղաքական բովանդակություն և ենթադրում է անցյալը ներկային ծառայեցնելու գաղափարական միտում։

Ի խնելով ուղղային-ազատագրական շարժման եռանդուն գաղափարախոսներէք մեկը, Խորենացին իսկական միտումնավոր գրող է և ինքն էլ բացեիքաց՝ պաշտպանում է պատմագրության գաղափարաբանութունը։ Նրա համոզմամբ՝ հայոց քաջ նախնի Արամի մասին ասորական մատենագիրները տեղեկութուններ չեն արձանագրել, որովհետեւ «եւ հարկ ինչ և ոչ պէտք կարեւոր էին նոցա՝ դադագ օտարաց և զաշխարհաց ի բարեայ և զհամբաւս հինս և զգրոյցս նախնականս յերեանց թագաւորաց կամ մեհենից մատենաս գրել։ մանաւանդ զի և ո՛չ պարծանք ինչ նոցա և ո՛չ բարգաւաճանք՝ օրար ազգաց քաջութիւն և գործք արութեան» (էջ 47)։ Պատմահայրը կանխամիտ մոտեցման արդյունք է դիտում նաև Պարուլուի հիմնադրած թագավորության և նրա գործերի մասին նույն ասորական աշխարհագիրում այլ կերպ՝ ի նպաստ ասորական գաղափարախոսության պատմվելու փաստը։ Շատ դժբախտում Խորենացին խոստովանում է պատմության նյութի և պատմական անձնավորությունների նկատմամբ իր վերաբերմունքը։ Նույն Պարուլուի քաջարի գործերի մասին գրելուց առաջ, շթաքնելով ողջ պատմաշրջանի հանդեպ իր անհատական դիրքորոշումը, նա հայտարարում է. «Եւ այժմ ահա զուարեացայց ոչ փոքր ինչ կրելով խնդութիւն, հասանելով ի տեղիս, յորում իսկ բնիկ նախնւոյն սերունդք ի թագաւորութեան հասանեն յաստիճան։ Վասն որոյ արժան է մեզ աստանօր մեծ գործ կատարել և բազումս ասել... ճառից» (էջ 64—65)։ Իսկ երբ հարկ է լինում թվարկել Պարուլուից սերված մյուս թագավորներին, նա անկեղծորեն ասում է. «Ինձ այսոքիկ արք ի մերոց թագաւորաց են սիրեհք, որպէս բնիկք և իմոյ արեանառուք և հաւաստի հարազատք։ Եւ սիրելի էր ինձ... առ նորօք յաշխարհ զմուտն իմ լինել, և նոցա տէրութեամբն խրախճանալ և յարգեացս ապրել վտանգիցս» (էջ 66—67)։

Գրելով հայոց ամբողջական պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչև իր օրերը, Խորենացին անցած իրադարձություններից ու դեմքերից ընտրում է ամենագլխավորները, հիմնականում ծանրանալով այն կողմերի վրա, որոնք լիովին համապատասխանում են իր ազգային-քաղաքական, պատմա-փիլիսոփայական և գրական-գեղարվեստական նպատակադրմանը։ «Եւ այս կարգ գրուցաբանութեան դադարում առցի,— մի տեղ ասում է Պատմահայրը,— զի հանդէս է մեր՝ ոչ զպատմութեանն ողջաբանութիւն գրել, այլ ջանալ ցուցանել զառաջինսն մեր և զբուն հին նախնիս» (էջ 32)։ Մի այլ տեղ՝ խոսելով Մար Արասի գործի մասին, նշում է. «Բազում ինչ զկնի այսոքիկ պատմի ի մատենիս, այլ մեք, որ ինչ պիտոյն մերոյ հաւաքմանս է, շարեցուք» (էջ 37)։ Պատմական անձնավորությունների ընտրության հարցում Խորենացին որդեգրել է Էփաղոնի սկզբունքը, կարգալով նրա գործում այն մասին, թէ «մանր զամենայն ի սկզբան մերոյ աշխատութեանս սկսաք գրել զազգաբանութիւնսն ի դիւանաց արքունի, այլ առաք հրաման ի թագաւորաց՝ թողալ զանշանից և զվատաց առանց ի հեղոն օյեղատակն, և գրել միայն զփառս և զիմաստունս և զաշխարհակալս նախնիս, և մի յանպէտս զժամանակս մեր ծախել» (էջ 21)։

Խորենացին ևս հայոց անդյալից առանձնացնում և մեծարում է դիւանավորական կրթվի, երկրի հզորացմանը նախանձախնդիր, հայրենի պետականություն շինացման ուղղությամբ մեծ ու հերոսական գործեր արած անձանց։ «Միքեմ կոչել այսպէս ըստ քաջութեան,— խոստովանում է Քեթիկոսհայրը,— Հայկ, Առաք. Տիգրան. քանզի ըստ քաջացն՝ ազգք քաջք, իսկ միջոցքն՝ որպէս դէպ ումեք թուլէ՛լ կոչել» (էջ 85)։

Հայկը հորենացուն գրավել է իր ազատասիրական ոգով, մարտունակությամբ ու քաջությամբ, բռնապետին տապալելու համար ընձենված պահը որսալու հնարագիտությամբ ու վճռականությամբ: Արամն ընդօրինակելի է հայրենիքի նկատմամբ ունեցած անձնագոհ նվիրվածությամբ: Արամի մասին հորենացին գրում է. «Սա այր աշխատասէր և հայրենասէր եղևալ, ... լաւ համարէր զմեռանելն ի վերայ հայրենեացն, քան թէ տեսանել զորդիս օտարածնաց կոխելով զսահմանս հայրենեացն և հարազատից արևան նորա տիրել արանց օտարաց» (էջ 43):

Լիստ Քերթողահոյ՝ սերունդների հայրենասիրական դաստիարակության գործում բացառիկ օրինակ է Տիգրան Մեծի կերպարը. «Սա ամենեցունց թագաւորացն մերոց հարստագոյն և խոհեմագոյն, և արանցն այնոցիկ և ամենեցունց քաջ,— բնութագրում է Տիգրանին Պատմահայրը— Եւ զսահմանս մերոց բնակութեանս ընդարձակեալ՝ ի հինսն մեր հասուցանէր յեզերս ծայրից բնակութեան, և ամենեցունց, որ առ իւրովքն էին ժամտնակօք՝ նախանձելի, և զկենացս՝ ըղձալի ինքն և ժամանակ իւր: Զի ո՞ր ի նշմարիտ արանց, և որոց ի բարս արութեան և խոնակամութեան սիրելութիւն կայցէ, սորա յիշատակօն ոչ զուարմանցի, և յուրոբեցի այսպիսի այր լինել» (էջ 71—72):

Տիգրանի գործունեությունը ներկայացնելիս Պատմահայրը հանդես է բերում դեղեցկի մի ըմբռնում, որ սերտորեն շաղկապված է հայրենիքի հասարակական-քաղաքական վիճակի մասին հեղինակի փայփայած բաղձանքի հետ: «Արանց կացեալ դուրս և արութիւն ցուցեալ,—մատնանշում է հորենացին,—զազգս մեր բարձրացոյց և զքնզ լծով կացեալս՝ լծադիրս և հարկապահանջս կացոյց բազմաց. մթերս ոսկոյ և արծաթոյ և քարանջ պատուականաց և զգիստուց՝ պէս պէս գունից և անկուածոց, արանց միանգամայն և կանանց՝ հասարակաց բազմացոյց, որովք տգեղագոյնքն իրրև զգեղաւորս երևէին: սքանչելիք, և գեղաւորքն ըստ ժամանակին առ հասարակ դիւցազնացեալք: ...նաղաղութեան և շինութեան բերող, իւղով և մեղու զամենայն հասակ պարարեալ» (էջ 72):

Նյութի և գործող անձանց այսպիսի ընտրությամբ, դրանց նկատմամբ ունեցած վերաբերմունքի այսպիսի անխախտ սկզբունքով է հորենացին հասել «Հայոց պատմության» հոյակապ կերտվածքին, որ աչքի է ընկնում բովանդակության ու կառուցվածքի սերտ ներդաշնակությամբ, բոլոր մասերը թե՛ առանձին-առանձին և թե՛ միասնաբար մեկ ընդհանուր նպատակադրման ծառայելու մտահղացմամբ: Ուստի և՛ հորենացու գիրքը գերծ է ավելորդաբանությունից, չկա որե՛է հատված կամ փաստ, որ անտեղի կամ արհեստականորեն ընկալված լինի մեծ հյուսվածքին: Ի դեպ՝ Քերթողահայրը գիտակցաբար է ձգտել այդ արդյունքին, ունենալով այն տեսակետը, թե ավելորդաբանությունը կարող է խաթարել մեծ դերծի ուրակն ու արժեքը: «Եւ զքեզ,—զգուշացնում է նա պատմիչատուին,—որպէս բազում անգամ, և այժմ աղաչեմ, մի՛ յաւելորդան հարկաւորել զմեզ, և սակաւ կամ յոլով բանիւք՝ զմեծ և զհաւաստի բովանդակ աշխատութիւնս մեր ընդ վայր և աւելորդ ցուցանել գործ, զի նմանագոյնս որպէս ինձ՝ և քեզ գործէ վտանգս» (էջ 198):

Նկատենք, որ հորենացու այս տեսակետը իր դեղագիտական բովանդակությամբ կանխում է գերմանացի խոշոր մտածող Հեգելի այն պահանջը, թե «արվեստի ստեղծագործության մեջ պետք է մտնի միայն այն, ինչ վերաբերում է հատկապես տվյալ որոշակի բովանդակության բացահայտմանն ու դրսևորմանը, որովհետև ավելորդ ոչինչ պիտի չլինի»⁷:

Հայտնի է, որ հորենացին երբեմն ժողովրդական բանահյուսությունն օգտագործում է որպես պատմության աղբյուր: Ընդ որում՝ միակողմանի կլինի ասել, թե նա բանահյուսությանն է դիմում միայն այն ժամանակ, երբ բացակայում են գրավոր սկզբնաղբյուրները⁸: Մի օրինակով արդեն տեսանք,

⁷ Դ. В. Ф. Гегель. Эстетика. В 4-х т., т. I. М.: 1968. с. 24.

⁸ Տե՛ս Մանուկ Աբեղյան. նշվ. աշխ., էջ 296:

որ Պատմահայրը գրավոր նյութը հաստատում է առասպելի տվյալով: Եվ իսկապես, «Հայոց պատմության» մեջ կարելի է հանդիպել այդպիսի այլ փաստերի. «Արդարացուցանել և այս զասացեալ զրոյցս անգիրս», «Յայտնեն զայս ճշմարտապէս և թուելեաց երգք, զոր պահեցին ախորժելով, որպէս լսեմ, մարդիկ կողմանն գինեւտ գաւառին Գողթան...», «...որում և պարսից մատենքն վկայեն և հայոց երգք վիպասանաց» (էջ 33, 84, 176):

Թե ինչու է Խորենացին պատմության համար նյութ քաղում բանահյուսությունից, բացատրվում է ոչ միայն գրավոր աղբյուրների բացակայությամբ, այլև բանահյուսության մասին հայ մտածողի ունեցած գիտական հայացքով: Ըստ Խորենացու՝ ժողովրդական բանահյուսական երկերն առասպելներ են⁹, իսկ առասպելները «զճշմարտութիւն իրացն այլաբանաբար յինքեանս ունին թաքուցեալ» (էջ 90): Այս տեսակետը, անշուշտ, գալիս է Պլատոնից, որի երկերին ծանոթ էր Խորենացին և որը «Պետություն» աշխատության մեջ, խոսելով մանուկների գեղարվեստական դաստիարակության մասին, գտնում է, որ առասպելները (միֆերը) «բազմանրապես ասած՝ սուտ են, բայց նրանց մեջ կա նաև ճշմարտություն»¹⁰:

Խորենացին համոզված է, որ հնարավոր է վեր հանել առասպելների հիմքում թաքնված ճշմարտությունը և այդպես բանավոր ստեղծագործությունը դարձնել պատմության սկզբնաղբյուր: Եվ շատ անգամներ Պատմահայրը փորձում է բացահայտել այլաբանությունների ճշմարտությունը:

Ահա մի նմուշ նման փորձերից, որ վերաբերում է «Հեծաւ արի արքայն Արտաշէս» սկավաճքով հատվածի «ոսկէօղ շիկափոկ պաշտաւն» արտահայտությունը. «Քանզի պատուեալ է առ ալանս մորթ կալմի՞ր՝ լայրա շատ և ոսկի բաղում տուեալ ի վարձանս՝ [Արտաշէս] առնու զտիկի՞: օրիորդն Սաթինիկ: Այս է ոսկէօղ շիկափոկ պարանըն» (էջ 179):

Եթե որպես հետազոտող և աղբյուրաբան Պատմահայրը առասպելի մեջ տեսնում և ձգտում է վեր հանել նրա բանական հատիկը, ապա որպես հավաստի պատմահայրության ջատագով՝ արհամարհանք է դրսևորում դրա նկատմամբ: Տորք Անգեղի առասպելը նա համարում է «անյաջ և փծուն» (էջ 114): Նա Տորքի ահելի ուժի և անհավատալի արարքների մասին պատմելուց հետո ակամայից բացականչում է. «Ո՛հ, կարի է առասպելս, այլ և առասպելաց առասպել» (նույն տեղում): Այս վերաբերմունքն, անշուշտ, արդյունք է տեսական-պատմագիտական որոշակի հայացքի: Բանն այն է, որ հաճախ առասպելներն առանց քննական հայացքի ու վերլուծության մուտք էին գործում մատենագրություն, ներկայացվելով որպես իրական, պատմական եղելություններ: Վերհիշենք Ագաթանգեղոսի և Բուզանդի գրքերի համապատասխան կտորները, Խորենացու գրքից՝ Սահակ Բագրատունու այն բազմաթիվ թախանձանքները, որոնցով առաջարկվում էր պատմիչին շարադրել այս կամ այն նյութը, առանց խորամուխ լինելու դրա բնույթի մեջ, իրական է արդյոք, թե՞ մտացածիլ: Առասպելներն անվերապահորեն ճշմարտություն ընկալելու մոտեցմանը կտրականապես դեմ է Խորենացին:

Քրիթոդահայրը առանձին շեշտված ատելություն է ստեղծում պարսկական առասպելների նկատմամբ: Պահլավիկների առասպելները նա համարում է «բարբառումն»՝ ցնդաբանություն, և խոստանում պարսիկ Բարսումայի գործի հունարեն թարգմանությունից օգտվելիս մի կողմ թողնել դրանք (էջ 296—297): Բյուրասպ Աթահակի առասպելը կոչում է «փծուն և անճշուն», «սուտ, անմիտ և անհանձար» (էջ 89): Այնքան խորն է նրա հակակրակը Բյուրասպի առասպելի նկատմամբ, որ գրի առնելով, նույնիսկ «միտս անմտութեան նոցա տալով», և իր մեծարգո ու համառ պատվիրատուի ցանկությունը բավարարելով հանդերձ՝ այնուամենայնիվ չի դնում գրքի մասերից և ոչ մեկի մեջ: «Այլ ծանիր զատելութիւն մեր առ այսպիսի բան,— դիմում է նա Բագ-

⁹ Նույն տեղում, էջ 297:

¹⁰ П л а т о н. Сочинения в трех томах, т. 3, ч. 1, М, 1971, с. 155.

րատունի իշխանին,— զի ո՞չ յառաջինսն մեր ասացիալ գիրս և ո՞չ ի վերջին րանս արժանատրեցաք շարեւ, այլ դատ և որովշ» (Լջ 90)։

Պարսկական առասպելներին նրա տված բացասական անհամոտությունն ունի իր պատճառները, որոնցից մեկին առնչվում է գեղագիտական պոստանջի հետ։ Ի տարբերություն հունական «ոլիմպոս» առասպելների, պարսկականների մեջ Ժերթողհաջյուրը չի տեղադրվում գեղարվեստական բարձր արժանիքներ, դրանք անճոռնի են, գոհհիկ, անմշակ, դուրկ՝ ներքին լիաստից։ Պարսկական առասպելների նկատմամբ հայ հեղինակի օխտոդական վերաբերմունքի երկրորդ պատճառը ինքնին հասկանալի է։ II, միայն խորհեցին, V դարի երկրորդ կեսի համայն հայությունն էր տոգորված հակապարսկական տրամադրությամբ, որը VII դարից սկսած, երբ արարական արշավանքների հետևանքով կործանվեց պարսկական բնապետությունը, և Իրանը ևս բնկավ օտար նվաճողների լծի տակ, դադարեց հասազգային բնույթ ունենալուց։

Այսպիսով, Մովսես խորենացու գրական-գեղագիտական բնութագրերը ամբողջությամբ առնված՝ պայմանավորված են մի ժամանակաշրջանով, որի էական գծերն են պարսկական ռոմանտիզմի դեմ ուղղված ազատագրական տրամադրությունները, ազգային ոգու բարձրացման և ինքնաճանաչման ձգտումները՝ անցյալի հերոսական անհատականությունների հայտնաբերմամբ և օգտագործմամբ, մշակութային կյանքի վերելքի համար նոր և հուսալի մայրուղիների որոնումը։ Այս գծերը հաաուկ են միայն V դարին։

Հայ մատենագրության արշավույսին, սահղծագործական աշխատանքի ընթացքում խորենացին մշակեց պատմագրական առձակի իր տեսությունը, որը թեպետ չվերածվեց կուռ ու համակարգված գիտություն, բայց անշնչելի հետք թողեց հետագա ժամանակների ազգային պատմագրության վրա։ Եվ պարզաբանիով իր պաշտպանած սկզբունքները, Պատմահայրն, ըստ էության, հետագայում էր հենց այդ նպատակը՝ որակական նոր հունի մեջ դնել պատմագրական արձակի հեաագա գարգացումը։ Եվ խորենացուց հետո հանդես եկած մեր գրեթե բոլոր պատմիչները, ապա գեանիքները պաշարից, տաղանդի և ունակությունների չափից, իրենց աշխատությունները շարագրելիս մշտապես ջանացել են հետևել խորենացու նախադրած չափանիշներին։

ЛИТЕРАТУРНО-ЭСТЕТИЧЕСКИЕ ВЗГЛЯДЫ МОВСЕСА ХОРЕНАЦИ

В. С. НЕРСИСЯН

Резюме

«История Армении» Хоренаци создавалась в период подготовки освободительных восстаний 80-х гг. V в. против персидской тирании и была призвана служить делу укрепления национального духа и самосознания армян. Этой установкой и определяются литературно-эстетические взгляды автора. Источник прекрасного он усматривает в действительности и это понятие распространяет на явления, которые отражают самостоятельность и могущество родины. Хоренаци придает большое значение созданию исторических произведений. Интересны его взгляды на вопросы познавательного значения и полезности исторических сочинений. Он признает, что историографии вообще свойственна тенденциозность и во многих случаях сам обосновывает свое тенденциозное отношение к тем или иным фактам и личностям истории. Он придерживается той точки зрения, что повествовательные излишества могут лишить большое творение полноценности. По Хоренаци, народные произведения являются мифами, которые «аллегорически скрывают в себе правду». И он убежден, что можно выявить кроющуюся в основе мифов правду и сделать из устного творчества исторический источник. Вместе с тем, как ревнитель достоверной истории, Хоренаци выражает решительное пренебрежение к мифам, считая их «невероятными, лживыми и слепыми».